ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՍԿՈՅԱՆ ԼԻԼԻԹ ԱՄՐԱՍՏԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02. - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (կերպարվեստ) մասնագիտությամբ
Մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Հ.Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յու.Վ.Յուզբաշյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ա. Պ. Քեշիշյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2018թ. սեպտեմբերի 26-ին՝ ժամը 12^{00}-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. օգոստոսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. ՍՎԱՋՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ են ստեղծագործաբար մտածող, ազգային և համաշխարհային մշակութային արժեքները կրող, դրանք հարստացնող ու փոխանցող անդամներ: Փոխակերպվող հասարակության զարգացման արդի միտումները կրթական համակարգին թելադրում են նոր չափանիշներին համապատասխան մասնագետի պատրաստում՝ ունակ մասնագիտական մշտական աճի, սոցիալական և մասնագիտական շարժունության, իմացական, հոգևոր, մշակութային ոլորտներում ներդաշնակ կենսագործունեության: Այս համատեքստումն առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում անձի ստեղծագործական գործունեության, մասնագիտական կոմպետենտության ձևավորման հարցերը:

Անձի ստեղծագործական գործունեության, ստեղծագործական կարողությունների և ընդունակությունների զարգացման հարցերը դիտարկվել են դեռևս անտիկ շրջանի հույն փիլիսոփաների, Վերածննդի դարաշրջանի մեծ մտածողների, նոր և նորագույն շրջանի փիլիսոփաների ու մանկավարժների աշխատություններում (Պլատոն, Արիստոտել, Ն.Ա.Բերդյաև, Լ.Ս.Վիգոտսկի, Ե.Ա.Գրոմով, Ա.Ն.Լուկ, Ա. Մասլոու, Ա.Գ.Սպիրկին, Ա.Ա.Մելիք-Փաշաև, Ռ.Ն.Խրոմիշկինա, Ն.Բ.Նաումով, Վ.Ա.Մալցևա, Ս.Ս.Բրիկունով, Լ.Թ.Ասատրյան, Լ.Ս.Ներսիսյան, Ժ.Ս.Գրիգորյան, Հ.Ռ.Ֆարզադյան և այլք):

Արժևորելով դիտարկված հետազոտությունների գիտական արժեքն ու նշանակությունը՝ այնուհանդերձ հարկ է նշել, որ դրանցում խորությամբ ուսումնասիրված չեն բուհի գեղարվեստական կրթության համակարգում արվեստագիտական առարկաների բովանդակության ստեղծագործական բաղադրիչի դերը ապագա մասնագետների ստեղծագործական կարողությունների զարգացման գործում:

Առկա է որոշակի հակասություն. մի կողմից, ելնելով կրթության արդիականացման ժամանակակից մոտեցումներից, բարձր պահանջներ են ներկայացվում ապագա մասնագետների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակին՝ որպես նրանց մասնագիտական կոմպետենտության կարևոր բաղադրիչի, մյուս կողմից՝ բավականաչափ հետազոտված չէ արվեստագիտական առարկաների ուսուցման և այդ գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետ մեթոդիկայի մշակման և գործնականում դրա կիրառման հիմնախնդիրը:

Հետազոտության նպատակն է մշակել մանկավարժական բուհում արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետ մեթոդիկա:

Հետազոտության օբյեկտը բուհում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացն է:

Հետազոտության առարկան արվեստագիտական առարկաների ուսուցման ընթացքում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդիկան է:

Հետազոտության գիտական վարկածը. մանկավարժական բուհում արվեստագիտության առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների կողմից տեսական գիտելիքների յուրացումը և դրա հիման վրա ստեղծագործական կարողությունների զարգացումն արդյունավետ կիրականանա, եթե՝

- ուսումնասիրվեն, վերլուծվեն և որպես մեթոդաբանական հիմք օգտագործվեն հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, արվեստագիտական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները,
- բացահայտվեն և հաշվի առնվեն արվեստագիտական առարկաների ուսուցման և այդ գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների ցարգացման սկզբունքները, օրինաչափությունները և առանձնահատկությունները,
- սահմանվեն արվեստագիտական առարկաներից գիտելիքների յուրացման և դրանց հիման վրա ստեղծագործական կարողությունների զարգացման չափանիշները, ցուցանիշները և մակարդակները,
- արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացը և նրա ստեղծագործական բաղադրիչը դիտարկվի որպես ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման կարևոր գործոն,
- առաջադրվեն և փորձարարությամբ հիմնավորվեն արվեստագիտական առարկաների ուսուցման ընթացքում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետ մեթոդկան համակարգ և նրա իրականացման արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմաններ:

Հետազոտության նպատակով, օբյեկտով, առարկայով և վարկածով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1.Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, արվեստագիտական, սոցիոլոգիական, մանկավարժական տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները՝ որպես հետազոտության մեթոդաբանական հիմք:

2.Բացահայտել արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման սկզբունքները, օրինաչափությունները ու առանձնահատկությունները:

3.Բացահայտել և հետազոտությամբ հիմնավորել գեղարվեստական կրթության համակարգում ուսումնասիրվող արվեստագիտական առարկաների բովանդակության ստեղծագործական բաղադրիչը և դրա ազդեցությունը ուսանողների գեղարվեստական ստեղծագործական կարողությունների զարգացման վրա:

4. Սահմանել արվեստագիտական առարկաներից գիտելիքների յուրացման արդյունքում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացվածության մակարդակները, չափանիշներն ու ցուցանիշները:

5. Մշակել արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետ մեթոդական համակարգ, առաջադրել դրա իրականացման մանկավարժական պայմաններ և փորձարարությամբ հիմնավորել այն:

Հետազոտության մեթոդները. առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ **մեթոդները՝**

- **տեսական՝** հետազոտության հիմնախնդրին առնչվող փիլիսոփայական, մեթոդական, հոգեբանական, մանկավարժական գրականության ուսումնասիրում, վերլուծություն, տվյալների համեմատում, համադրում և ընդհանրացում,
- **էմպիրիկ՝** դիտում, անկետավորում, զրույց, փորձարարական ուսուցում, գործունեության արդյունքների գնահատում, մանկավարժական փորձարարություն,
- **վիճակագրական՝** փորձարարության ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական մշակում, արդյունքների տրամագրային պատկերում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են կազմել անձի ստեղծագործականության, ստեղծագործական գործունեության, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, սոցիոլոգիական, մանկավարժական հետազոտությունները ու հայեցակարգերը, ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների, ձևերի վերաբերյալ տեսությունները և կրթության կոմպետենտային ու մշակութաբանական մոտեցումները:

Հետազոտության փուլերը.

Առաջին փուլում (2010-2011թ.թ.) ուսումնասիրվել և վերլուծվել են հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական,

հոգեբանամանկավարժական, արվեստագիտական, մեթոդական գրականությունն ու հայեցակարգերը: Ուսումնասիրվել և վերլուծվել են արվեստագիտական առարկաների ծրագրերն ու չափորոշիչները, ճշգրտվել և կոնկրետացվել են «ստեղծագործական կարողություններ», «ստեղծագործական ընդունակություններ» հասկացությունները, սահմանվել է «ստեղծագործական կոմպետենտություն» հասկացությունը, բացահայտվել է հետազոտվող հիմնախնդրի վիճակը մանկավարժության տեսության և պրակտիկայի մեջ, ինչպես նաև փորձարարական բազա հանդիսացած բուհերի կրթական գործընթացում: Արդյունքում սահմանվել են հետազոտության նպատակը, առարկան, վարկածը և խնդիրները:

Այս փուլում իրականացվել է արձանագրող փորձարարություն՝ մանկավարժական բուհերում արվեստագիտական առարկաներ ուսումնասիրող ուսանողների գիտելիքների մակարդակը հայտորոշելու նպատակով:

Երկրորդ փուլում (2012-2013թ.թ.) բացահայտվել է արվեստագիտական առարկաների բովանդակության ստեղծագործական բաղադրիչը: Սահմանվել են հետազոտության սկզբունքները, նախագծվել է ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդական համակարգ, որը ներառել է ուսուցման արդյունավետ մեթոդներ, տեխնոլոգիաներ և որոշակիացվել են դրանց իրականացման մանկավարժական պայմանները, որից հետո իրականացվել են փորձարարական աշխատանքներ առաջադիր աշխատանքային վարկածը ստուգելու համար:

Երրորդ փուլում (2014-2015թ.թ.) անցկացվել է մանկավարժական փորձարարություն, որի ընթացքում ստուգվել և հիմնավորվել արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման առաջարկվող մեթոդական համակարգի և մանկավարժական պայմանների արդյունավետությունը: Կատարվել է մանկավարժական փորձարարության արդյունքների վերլուծություն, ընդհանրացում և ատենախոսության ձևավորում: Հրատարկվել են հոդվածներ և զեկուցումներ հետազոտության թեմայի վերաբերյալ:

Հետազոտության գիտական նորույթը.

- Հիմնախնդրի վերաբերյալ տեսական և հայեցակարգային մոտեցումների հիման վրա նորովի են մեկնաբանվել «ստեղծագործական կարողություն», «ստեղծագործական ընդունակություններ» հասկացությունները, սահմանվել է «ստեղծագործական կոմպետենտություն» հասկացությունը:
- Բացահայտվել և հիմնավորվել է արվեստագիտական առարկաների բովանդակության ստեղծագործական բաղադրիչը՝ որպես բուհում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման կարևոր գործոն:

- Բացահայտվել և բնութագրվել են արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման սկզբունքները, օրինաչափությունները ու առանձնահատկությունները:
- Սահմանվել են արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակները, դրանց չափանիշներն ու ցուցանիշները՝ որպես չափանիշներ հավելելով ստեղծագործական գործունեության պատրաստակամությունը, ստեղծագործական երևակայությունը, գեղարվեստական ստեղծագործությունների ընկալման և դրանց ստեղծագործական վերարտադրման կարողությունը, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների կատարման վարպետությունը:
- Մշակվել և փորձարարությամբ հիմնավորվել է ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետ մեթոդական համակարգը, որը ներառում է արվեստագիտական առարկաների բովանդակությունը, ուսուցման սկզբունքները, ձևերը, միջոցները, մեթոդները, տեխնոլոգիաները,ստեղծագործական առաջադրանքներն ու ինքնուրույն աշխատանքները և դրանց կիրառման արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- Համակարգվել են հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ տեսություններն ու հայեցակարգերը, առաջարկվել են նոր մոտեցումներ և տեսական դրույթներ գեղարվեստական կրթության համակարգում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման վերաբերյալ:
- Մեր կողմից առաջարկվող արվեստագիտական առարկաների դասավանդման և ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդիկան կհարստացնի գեղարվեստական մանակավարժությունը տեսական-մեթոդական նոր դրույթներով:

Հետազոտության գործնական նշանակությունը. հետազոտության արդյունքները կարող են ներդրվել բուհերում արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով, իսկ մշակված մեթոդիկան գործնական օգնություն կլինի այդ առարկաները դասավանդողներին:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Արվեստագիտական առարկաների բովանդակության ստեղծագործական ներուժի, ուսուցման սկզբունքների օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտումը

նպաստում է այդ առարկաների դասավանդման մեթոդիկայի կատարելագործմանը, որը կարևոր պայման է ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման և ստեղծագործական կոմպետենտության ձևավորման համար:

2. Մեր կողմից առաջարկվող մեթոդական համակարգը, որը ներառում է արվեստագիտական առարկաների բովանդակությունը, ծրագրերը, ուսուցման սկզբունքները, մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները և ձևերը, ապահովում է ուսանողների արվեստագիտական գիտելիքների յուրացումը և ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը:
3. Արվեստագիտական առարկաներից ուսանողների գիտելիքների յուրացվածության և ստեղծագործական կարողությունների ձևավորվածության չափանիշների, ցուցանիշների և մակարդակների որոշիակիացումը նպաստում է այդ գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, վերահսկմանը, գնահատմանը և հետադարձ կապի ապահովմանը:
4. Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացումը դինամիկ, համակարգված, կատարելագործվող գործընթաց է, որի արդյունավետ իրականացումը ապահովում են հետևյալ մանկավարժական պայմանները՝

- բուհում ստեղծագործական կրթական միջավայրը,
- ուսանողների ստեղծագործական ներուժի խթանում ուսումնահետազոտական, ստեղծագործական գործունեության ընթացքում՝ հատուկ մշակված ստեղծագործական առաջադրանքների, վարժությունների, փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում,
- արվեստագիտական գիտելիքների յուրացման, ստեղծագործական և ուսումնահետազոտական շարունակական գործունեության ապահովում,
- ուսանողների անհատական ստեղծագործական աշխատանքների ցուցադրությունների, մրցույթների կազմակերպում և իրականացում,
- ուսանողների գեղարվեստական-ստեղծագործական գործունեության, ինքնիրացման, դրդապատճառային-պահանջմունքային ոլորտի խթանում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 150 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության՝ **«Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման տեսական-մեթոդաբանական հիմքերը»** խորագրով առաջին գլխի առաջին ենթագլուխը՝ «**Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումների վերլուծություն**», նվիրված է գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման վերաբերյալ հայեցակարգային, տեսական դրույթների և մոտեցումների մեկնաբանմանն ու վերլուծությանը:

Դիտարկված և նորովի են մեկնաբանված «ստեղծագործություն», «ստեղծագործական ներուժ», «ստեղծագործական ընդունակություններ», «ստեղծագործական կարողություններ» հասկացությունները, սահմանվել է «ստեղծագործական կոմպետենտություն» հասկացությունը:

Որոշակիացված է բուհում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման քայլերի հաջորդականությունը: Սահմանվել է, որ ստեղծագործական կարողությունները ստեղծագործական բնույթի գիտակցական գործողություն կատարելու ուսանողի գործնական ունակությունն է, որը դրսևորվում է կոնկրետ գործունեության կատարման մեջ:

Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացումը պետք է ընկալվի ոչ միայն նրանց գեղարվեստական կատարողական կոմպետենտության մակարդակի, այլև ստեղծագործական ներուժի որակական փոփոխությունը, որը նպատակաուղղված կերպով իրականացվում է գեղարվեստական կրթության ֆակուլտետներում: Բնութագրված են արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացի գործառույթները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Արվեստագիտական առարկաների բովանդակային հնարավորություններն ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման գործում»,** դիտարկված է արվեստագիտական առարկաների ստեղծագործական բաղադրիչի դերն ուսանողների կողմից նյութական և հոգևոր մշակութային ժառանգության յուրացման, դրանց առանձնահատկությունների գիտակցման, գեղագիտական, ստեղծագործական ընկալման և ստեղծագործական կարողություններիմ զարգացման գործում:

Մասնակիորեն անդրադարձել ենք նաև գեղարվեստական կրթության ֆակուլտետում դասավանդվող երաժշտական և երաժշտագիտական առարկաների ստեղծագործական ներուժին՝ որպես ուսանողների ստեղծագործական երևակայության զարգացման միջոցի:

Երրորդ՝ **«Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների**

զարգացման սկզբունքները, առանձնահատկությունները և օրինաչափությունները» խորագրով ենթագլխում բացահայտված և բնութագրված են արվեստագիտական առարկաների ուսուցման սկզբունքները, առանձնահատկություններն ու օրինաչափությունները և այդ գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոնները: Ներկայացված են ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման փուլերը:

Սահմանված և բնութագրված են արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակները, այդ մակարդակների որոշման չափանիշներն ու ցուցանիշները:

Ատենախոսության երկրորդ՝ «**Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մշակված մեթոդիկայի փորձարարական հիմնավորումը**» խորագրով գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացման մեթոդիկայի և մանկավարժական պայմանների բնութագիրը»,** ներկայացված են արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման, ստեղծագործական կարողությունների զարգացման մեր կողմից առաջարկված միջոցները, մեթոդներն ու տեխնոլոգիաները, դրանց արդյունավետ իրականացման նպատակով առաջարկվող մանկավարժական պայմանները: Հատուկ մշակված դասերի, առաջադրանքների, ուսուցման փոխներգործուն մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման օրինակներով հիմնավորվել է, որ բուհի ուսումնական գործընթացում դրանց նպատակային կիրառումը նպաստում է ծրագրային նյութի, նոր գիտելիքների յուրացմանը, ուսանողների պրակտիկ փորձի, ստեղծագործական, հետազոտական կարողությունների զարգացմանը:

Մի շարք հետազոտողների տեսակետների վերլուծությունը և արվեստագիտական առարկաների դասավանդման գործընթացի՝ մեր կողմից կատարված դիտարկումները թույլ են տվել փաստել, որ փոխներգործուն մեթոդների նպատակային կիրառումն ազդում է ուսումնական գործընթացի ոչ միայն ընթացակարգային բաղադրիչների վրա, այլև թելադրում է մասնագիտական առարկայի ուսուցման նոր տրամաբանություն և ռազմավարություն:

Բնութագրված են ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված ստեղծագործական աշխատանքների, ներկայացումների՝ մեր կողմից մշակված գնահատման չափանիշները:

Գործնականում հիմնավորված և բնութագրված են գեղարվեստական կրթության համակարգում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման միջոցները:

Հիմնավորված է, որ ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման կարևոր պայման են գեղարվեստական-կատարողական փորձի ձեռքբերումը և արվեստագիտական գրականության քննադատական վերլուծությունները, ավարտական աշխատանքները, որոնց արդյունքում մշակվում են ստեղծագործական, տեսական նոր մոտեցումներ, կիրառվում են գիտական և գեղարվեստական գործունեության կազմակերպման, ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդներ:

Գծապատկերով ներկայացված է գեղարվեստական կրթության համակարգում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման՝ առաջարկվող մեթոդական համակարգի կառուցվածքը և տեխնոլոգիական մոդելը:

Հիմնավորվել է, որ գեղարվեստական կրթության որակի բարձրացումը պայմանավորված է ուսանողների դրդապատճառային ոլորտի և ակտիվության խթանմամբ, ստեղծագործական կարողությունների և մասնագիտական կոմպետենցիաների զարգացմամբ: Այդ գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար առաջարկվել է մեթոդական համակարգ, որը ներառում է բազմապիսի փոխներգործուն, համագործակցային և նախագծային մեթոդներ, ստեղծագործական, պրոբլեմային-որոնողական առաջադրանքներ, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, դասերի ձևեր և այլն:

Երկրորդ ենթագլխում՝ **«Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը»,** բնութագրված է փորձարարական աշխատանքների ընթացքը: Փորձարարական աշխատանքների նպատակն էր փորձարկել և հիմնավորել արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման՝ մեր կողմից առաջարկվող մեթոդական համակարգը:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ ուսանողների ստեղծագործական կարողությունները՝ որպես նրանց ստեղծագործական-հետազոտական գործունեության արդյունք առավել արդյունավետ են զարգանում, եթե բարձր է արվեստագիտական գիտելիքների յուրացվածության մակարդակը, զարգացած են նրանց ստեղծագործական, տարածական մտածողությունը, երևակայությունը, գունազգացողությունը, կատարողական տեխնիկան, ստեղծագործական պահանջմունքներն ու դրդապատճառները, կիրառվում է կրթական գործընթացում նշված առարկաների ուսուցման

մասնագիտական գիտելիքների յուրացման, ստեղծագործական գործունեության իրականացման, կատարողական վարպետության զարգացման արդյունավետ մեթոդիկա, որն ապահովում է ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման դրական շարժընթացը(դինամիկան) :

Փորձարարական աշխատանքներն իրականացվել են երեք փուլով՝ 2012-2016 թթ. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի և Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ Շիրակի պետական համալսարան) համապատասխան ֆակուլտետների բազայի վրա:

Նախագծվել է փորձարարական աշխատանքի բովանդակությունը և յուրաքանչյուր փուլի խնդիրները:

Փորձարարական աշխատանքներին մասնակցել են փորձարարական բազա հանդիսացած երեք ֆակուլտետի 100 ուսանող:

Մանկավարժական փորձարարությունը ներառել է երեք փուլ՝ **արձանագրող, կազմակերպական–գործնական, ամփոփիչ-գնահատման:**

Սահմանվել են ստեղծագործական կարողությունների զարգացվածության հետևյալ մակարդակները՝ 8-10 միավոր բարձր մակարդակ, 4-7 միավոր միջին մակարդակ, 1-3 միավոր ցածր մակարդակ:

Հետազոտության արձանագրող փուլում իրականացել են նպատակաուղղված մանկավարժական դիտումներ, զրույցներ, հարցումներ:

Առաջինից մինչև չորրորդ կուրսերի ուսանողների հարցման արդյունքները ենթարկվել են մաթեմատիկական մշակման. արդյունքները ներկայացված են աղյուսակների ու տրամագրերի տեսքով:

Ստացված արդյունքների վերլուծությունը թույլ տվեց սահմանել հետևյալը. ուսանողները 1-ին կուրսում դեռևս լիարժեք չեն պատկերացնում ստեղծագործական առաջադրանքի էությունը, բավականաչափ բարձր չէ ստեղծագործական մոտիվացիան, ստեղծագործական առաջադրանքները մեծ մասամբ վերարտադրողական բնույթի են:

Այսինքն՝ առկա է ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացվածության ցածր մակարդակ:

Մենք դա բացատրում ենք նրանով, որ ուսանողները դեռևս չեն ուսումնասիրել արվեստագիտական առարկաների բովանդակությունը, ծանոթ չեն արվեստի վարպետների ստեղծագործություններին և ուսուցման գործընթացում չեն կիրառվել ուսուցման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ:

Այս բացը մեր կողմից լրացվեց ուսումնական տարվա ընթացքում՝ փորձարարական աշխատանքի կազմակերպական-գործնական փուլում:

Կազմակերպական-գործնական փուլում արվեստագիտական առարկաների արդյունավետ ուսուցման և ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով մեր կողմից մշակվեցին «Հայ արվեստի պատմություն և տեսություն», «Դեկորատիվ կիրառական արվեստի պատմություն», «Ազգագրություն» ուսումնական առակաների ծրագրերը, գործնական պարապմունքների, ռեֆերատների, հետազոտական աշխատանքների թեմատիկան, ստեղծագործական առաջադրանքների և վարժությունների համալիրը, առաջադրվեցին ուսուցման ժամանակակից մեթոդներ, տեխնոլոգիաներ, դասերի ձևեր և որոշարկվեցին դրանց իրականացման մանկավարժական պայմանները:

Բուհում արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում առաջարկվող մեթոդական համակարգի ներդնման և կիրառման արդյունքները հնարավորություն ընձեռեցին որոշել ուսանողների ստղծագործական կարողությունների զարգացման դինամիկան ըստ տարիների:

Ամփոփիչ-գնահատման փուլում իրականացվել է ուսանողների ուսումնական գործունեության՝ ըստ մասնագիտական գիտելիքների յուրացման և տրված ստեղծագործական առաջադրանքների կատարման, ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների ներդնման և նրանց ստեղծագործական կարողությունների առանձին բաղադրիչների արդյունավետության զարգացման դինամիկայի փորձարարական ստուգում և գնահատում (ըստ ուսումնական տարիների՝ 2-րդ,3-րդ,4-րդ կուրսերում): Հետազոտության արդյունքները արտացոլված են աղյուսակներում և տրամագրերում:

Մշակված մեթոդիկայի կիրառմամբ ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքների կատարման ընթացքի մանկավարժական դիտումը և արդյունքների փորձագիտական գնահատականը թույլ տվեցին համարժեք գնահատել ուսանողների կողմից կատարած նախագծերը, համեմատաբար ճիշտ կառուցված կոմպոզիցիաները, ինքնուրույն հետազոտական-ստեղծագործական աշխատանքները և դրանց ներկայացումը, որը հավաստում է ստեղծագործական կարողությունների զարգացման դրական դինամիկայի մասին: Միևնույն ժամանակ ուսանողներին հնարավորություն ընձեռվեց գնահատել իրենց ստեղծագործական գործունեության արդյունքները:

Ուսանողների կողմից ստեղծագործական վարժությունների, առաջադրանքների կատարման, ինքնուրույն աշխատանքների՝ ռեֆերատների, գրաֆիկական և կերպարվեստային ստեղծագործությունների դիտման արդյունքում գնահատվել են ուսանողների ստեղծագործական կարողությունների բաղադրիչները՝ արվեստագիտական գիտելիքները կոմպոզիցիոն նոր հորինվածքների առաջադրումը, ստեղծագործական

երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, տարածական մտածողությունը, գունազգացողությունը:

Այդպիսի մոտեցումը տվեց իր դրական արդյունքները և ստեղծագործական կարողությունների զարգացման դրական դինամիկա դիտարկվեց 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում 2013-2014, 2014-2015, 2015-2016 ուս.տարիներին: Այդ մասին են վկայում փորձարարական ստուգման, գնահատման, ստեղծագործական առաջադրանքների կատարման արդյունքները (տրամագիր 1,2,3):

:



Տրամագիր 1. Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման դինամիկան 2-րդ կուրսում /2013-2014 ուս. տարի/



Տրամագիր 2. Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման դինամիկան 3րդ կուրսում, 2014-2015 ուս. տարում



Տրամագիր 3. Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման դինամիկան 4-րդ կուրսում, 2015-2016 ուս. տարում

Այսպիսով, փորձարարության արդյունքները ցույց տվեցին, որ արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում առաջարկվող մեթոդական համակարգի և մանկավարժական պայմանների կիրառումը ապահովում է ուսանողների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը:

Հետազոտությամբ ստացված արդյունքները հավաստեցին մեր կողմից առաջարկված գիտական վարկածի ճշմարտացիությունը՝ թույլ տալով ձևակերպել հետևյալ **եզրակացությունները**.

1. Մանկավարժական բուհում արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացումը՝ որպես նրանց ստեղծագործական կոմպետենտության բաղադրիչ, մասնագիտական պատրաստության համակարգում ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն:
2. Արվեստագիտական առարկաների ուսուցման և այդ գորընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման սկզբունքների, օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտումը և հաշվի առնումը էականորեն նպաստում է դիտարկվող գործընթացի արդյունավետ իրականացմանը:

3. Տեսական և գործնական հետազոտությամբ հիմնավորվել են ուսանողների ստեղծագործական կարողությունների կառուցվածքային բաղադրիչները, որոնց զարգացման համար գեղարվեստական կրթության ֆակուլտետում դասավանդվող արվեստագիտական առարկաներն ունեն զգալի ստեղծագործական ներուժ: Այս դրույթը հաստատվել է փորձարարական աշխատանքներով և մշակված մեթոդիկայի ներդրմամբ՝ ուսանողների ստեղծագործական կարողությունների դինամիկ զարգացման բարձր մակարդակը հավաստող արդյունքներով:
4. Տեսական վերլուծությունների և փորձարարական հետազոտությունների արդյունքում առանձնացվել են ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացվածության չափանիշներն ու ցուցանիշները:
5. Բուհում արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետությունը ապահովում է առաջարկվող մեթոդական համակարգը, որը ներառում է՝ այդ առարկաների բովանդակությունը, ուսուցման սկզբունքները, մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները, ձևերը՝ որոշակի մանկավարժական պայմանների առկայության պարագայում:
6. Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմաններն են ՝
   - բուհում կրթական-գեղարվեստական, ստեղծագործական միջավայրի ստեղծումը, ուսանողների ստեղծագործական ներուժի խթանումն ուսումնահետազոտական գեղարվեստական-ստեղծագործական գործունեության ընթացքում՝ հատուկ մշակված ստեղծագործական առաջադրանքների, մեթոդների և տեխնոլոգիաների միջոցով,
   - ուսանողների ստեղծագործական գործունեության ակտիվացումը ստեղծագործական առաջադրանքների կատարման միջոցով,
   - արվեստագիտական առարկաներից գիտելիքների ձեռքբերման, գեղարվեստական-ստեղծագործական և ուսումնահետազոտական շարունակական գործունեության ապահովումը,
   - ուսանողների անհատական աշխատանքների ցուցադրութ-յունների, մրցույթների կազմակերպումը և իրականացումը,
   - ուսանողների գեղարվեստական-ստեղծագործական գործունեու-թյան դրդապատճառային-պահանջմունքային ոլորտի խթանումը,
   - կրթական գործընթացի տեխնոլոգիական ապահովումը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ **հրապարակումներում.**

1. Իսկոյան Լ.Ա., Ուսանողների կողմից ազգային-հոգևոր արժեքների յուրացումը «Հայ արվեստի պատմություն» դասընթացում: Գորիսի պետական համալսարանի միջազգային 2-րդ գիտաժողովի աշխատանքների ժողովածու, 5 էջ:
2. Իսկոյան Լ.Ա., Արվեստագիտական առարկաների դերը ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման և մասնագիտական կայացման գործում: Модернизация образования в контексе современних педагогических парадигм, Сбопник научно-образовательных докладов и статей. Ереван,АГПУ, 2014թ. 5 էջ:
3. Իսկոյան Լ.Ա., Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոնները, առանձնահատկությունները, օրինաչափությունները: Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ. Գիտական տեղեկագիր, 2016, 7 էջ:
4. Իսկոյան Լ.Ա., Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթա ցում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման վերահսկումը եվ գնահատումը: Հովի, Թումայնաի անվան Վանաձորի պետական համալսարան, գիտական տեղեկագիր. 2016, 5 էջ:
5. Իսկոյան Լ.Ա., Գեղարվեստական կրթության համակարգում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման մանկավարժական մոդելը: Մանկավարժ ամսագիր, 2016, 13 էջ:
6. Իսկոյան Լ.Ա., Գեղարվեստական կրթության համակարգում ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման հնարավորությունները: Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ. Գիտական տեղեկագիր, 2016, 6 էջ:
7. Իսկոյան Լ.Ա., Ուսանողների կողմից ազգային-հոգևոր արժեքների յուրացումը Արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, 2016, 7 էջ:
8. Իսկոյան Լ.Ա., Երաժշտական առարկաների դերը սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման գործում: Կրթությունը և գիտությունը Արցախում, 2016. 10 էջ

ИСКОЯН ЛИЛИТ АМРАСТАНОВНА
РАЗВИТИЕ ТВОРЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ СТУДЕНТОВ В КОНТЕКСТЕ ПРЕПОДАВАНИЯ ИСКУССТВОВЕДЧЕСКИХ ДИСЦИПЛИН

Диссертация на соискание ученой степени кандитата педагогических наук по специальности 13.00.02 «Методика преподавания и воспитания» (изобразительное исскуство).

Защита диссертации состоится 2018г. сентября 26 в 12:00 на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

Актуальность исследования

Современные тенденции развития трансформирующегося общества предполагают неуклонный рост основного человеческого капитала – интеллекта, а также творческих способностей и компетентности, удельный вес которых на сегодняшний день достаточно высок.

С этой точки зрения актуальным становится вопрос по развития творческих умений будущих специалистов, формировании их базовых компетенций в процесе обучения исскуствоведческих дисциплин.

В основе настоящего исследования лежат первоочередные задачи развития художественного потенциала, творческих умений студентов в рамках учебного процесса исскуствоведческих дисциплин, а также разработки эффективных форми, методы, средства, технологии и определению педагогических условий успешной реализации этого процесса.

Цель исследования заключается в необходимости разработки эффективной методической системы преподавания искусствоведческих дисциплин и развития творческих умений учащихся.

Исходя из целей и гипотезы исследования нами были сформулированы следующие **задачи**:

1.изучить и проанализировать философские, психологические, искусствоведческие, социологические теории и концепцтуалные подходы касающиеся проблем исследования, которые составляют методологическую основу диссертации,

2.выявить принципы, особенности и закономерности развития творческих умений студентов в ходе изучения искусствоведческих дисциплин, обосновать творческий потенциал содержания искусствоведческих дисциплин и его воздействие на эффективность развития творческих умений студентов,

3.установить критерии, показатели и уровни оценки усвоения искусствоведческих знаний и развития творческих умений студентов в ходе изучения искусствоведческих дисциплин,

4.предложить и экспериментально обосновать эффективную методическую систему преподавания искусствоведческих дисциплин и развития творческих умений студентов в ходе изучения дисциплин упомянутого блока.

Научная новизна исследования

- Даются новые дефиниции таких понятий как “творческие способности”, “творческие умение” и определения понятия “творческая компетентность”.
- Выявлена и обоснована творческий потенциал содержания искусствоведческих дисциплин и его эффективное воздействие на развитие творческих умений студентов.
- Виявлены принципы и особенности развития творческих способностей учащихся в процессе обучения искусствоведчвских дисциплин.
- Разработана эффективная методика развития творческих умений студентов, который включает содержание искусствоведческих дисциплин, принципы , формы, средства, методы, технологии их изучения,
- Определены и обоснованы педагогические условия ,которые обеспечивает эффективность преподавания исскуствоведчвских дисциплин и развития творческих умений студентов.

Теоретическая значимость исследования.Доработанная методика в определенной степени обогатила методику преподавания исскуствоведческих дисциплин и развития творческих умений студентов новыми теоретическими и методическими подходами.

Практическая значимость исследования разработанная методика могут быть внедрена в процессе обучение искусствоведческих дисциплин и развития творческих умений студентов в рамках университетского образования и могут быть исспользованы преподавательямин художественных дисциплин.

Объем и структура исследования. Диссертация состоит из введения, двух взаимодполняющих и являющихся органическим развитием друг друга глав, выводов, и списка использованной литературы. Общий объем диссертации составляет 151 компьютерных страниц.

LILIT A. ISKOYAN

Developing Student's Creative Skills within Teaching Art Subjects

Thesis submitted for claiming the Degree of Candidate of Pedagogical Sciences, Specialty Field 13.00.02 – "Teaching and Education Methodology"

The defence will take place at SCC's (Supreme Certifying Committee's) 020 Degree-awarding Scientific Council's session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University

on September 26, 2018 at 12:00

(Address: Tigran Mets 17, 0010 Yerevan)

SUMMARY

The modern tendencies of development within transforming society suggest that the human capital is infinitely enhanced by intelligence, creativity, competence, whose share today is extremely high. Modern society need people of creative thinking who would maintain the world and national cultural values and enrich them.

This research is based on the priorities of students' artistic potential, creative abilities and capacities comprised within the University curriculum, as well as the respective methodological and methodical comprehension, in which the development of students' creativity and creative abilities, forms, methods and means, technologies and their effective identification of pedagogical conditions are of a great importance. This is what grounds the relevance of the research.

The aim of the research is to develop an effective methodological complex for teaching artistic disciplines and developing students' creative abilities.

Preconditioned by the aim, object, subject, and hypothesis, the following objectives have been set forth:

1. To study and analyze the pertinent philosophical, psychological, artistic, sociological, pedagogical theories and conceptual approaches referring to the problem as a methodological basis for the research;

2. To reveal and research the creative potential of the content of artistic subjects and its effective impact on the development of students' creative abilities;

3. To identify the content-based component of artistic subjects, principles, stages, peculiarities, patterns and factors affecting students' creative abilities in teaching process;

4. To develop and empirically substantiate the efficiency of methodological complex for boosting students' creative abilities in the process of teaching art subjects.

Scientific relevance of the research:

• It defines and interprets the notions of “creativity”, “creative ability” and “creative competence” in a new way.

• It reveals the creative component of the content of art subjects and its impact on the development of students’ creative abilities in the University educational process.

• It determines the factors, stages, principles, patterns, and peculiarities of the development of students’ creativity in the process of teaching art subjects.

• It develops the pedagogical-methodological model of students’ creative abilities.

• It substantiates theoretically the effectiveness of proposed model and, based on it, it implements an effective methodological complex in the University art education system, which includes modern approaches to modernization of education, the content of art subjects, their teaching principles, peculiarities, forms, methods, technologies and pedagogical presetting meant to provide its productivity.

Theoretical significance of the research. Theoretically, it has substantiated the role of the creative component of artistic subjects and the creative potential of students in the process of developing their creative abilities and professional competence.

The results of the research are meant to enrich and expand the respective theoretical concepts, provisions and pedagogical knowledge relevant to the developing the students’ creative abilities in the art-subject teaching process.

Practical significance of the research. The results of the research can contribute to the development of students' creative abilities in art education system of pedagogical universities.

Structure and volume of the thesis. The thesis consists of the introduction, two chapters, conclusions, the list of the literature quoted and involved.

The total volume of the thesis is 151 computer pages.